# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

«ՀՀՌՑ» ՓԲԸ կարիքների համար ՀՀՌՑ-ԳՀԽԾՁԲ-26/21 ծածկագրով Արեգի հեռուստատեսային հաղորդիչ կայանի էլեկտրասնուցման 10 կՎ օդային գծի նախագծերի պատրաստման և ծախսերի գնահատման խորհրդատվական ծառայությունների /Ծառայություն/ ձեռքբերման հայտերի բացման,գնահատման և ամփոփման գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի է ունեցել 14.05.2026թ. ժամը 10.00-ին
Մասնակցում էին՝

**Հանձնաժողովի նախագահ՝** Սահակ Դավթյանը
**Անդամներ՝** Սամվել Քոչարյանը
Գուրգեն Սահակյանը
Արման Մովսիսյանը
Հարություն Հեքիմյանը

**Հանձնաժողովի քարտուղար՝** Ա. Ավագյանը

1. Հանձնաժողովը արձանագրեց.

**Տեղեկություն հայտերի բացման վայրի, օրվա և ժամի մասին**

Ընդունել ի գիտություն, որ «ՀՀՌՑ» ՓԲ ընկերության կարիքների Արեգի հեռուստատեսային հաղորդիչ կայանի էլեկտրասնուցման 10 կՎ օդային գծի նախագծերի պատրաստման և ծախսերի գնահատման խորհրդատվական ծառայությունների **/Ծառայություն/** ձեռքբերման նպատակով 29.04.2026թ. էլեկտրոնային ARMEPS համակարգով **/Համակարգ/** հայտարարվել է ՀՀՌՑ-ԳՀԽԾՁԲ-26/21 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ **/Ընթացակարգ/**: Հայտերը բացվել են էլեկտրոնային www.armeps.am կայքի միջոցով, 07.05.2026թ. ժամը 10:00-ին:

2. **Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները, տվյալները**

| N | Մասնակցի անվանումը | Գործունեության հասցեն, էլ. փոստի հասցեն | Հեռախոսահամար | ՀՎՀՀ |
|---|---|---|---|---|
| 1 | Կայուն Զարգացման Ներդրումային Հիմնադրամ | ՀՀ, ք. Երևան, Ա.Արմենակյան 125-24<br>info@sdifund@gmail.com | (+374) 77 505 606 | 01297269 |
| 2 | Գրանդ Ինսփեքշն ՍՊԸ | ՀՀ, ք. Երևան, Զաքարիա Քանաքեռցու փ.,50շ<br>info@grandinspection.am | (+374) 94 322 432 | 09218126 |

3. Մասնակիցների առաջարկած գները

ՀՀ դրամ

| Հ/հ | Ծառայության անվանումը | Գնման գինը | մրցույթին մասնակցող կազմակերպությունների | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | անվանումները | Գնային առաջարկ | | |
| | | | | արժեք | ԱԱՀ | ընդհանուր գինը |
| 1 | Արեգի հեռուստատեսային հաղորդիչ կայանի էլեկտրասնուցման 10 կՎ օդային գծի նախագծերի պատրաստման և ծախսերի գնահատման խորհրդատվական ծառայություն | 800 000 | Կայուն Զարգացման Ներդրումային Հիմնադրամ | 665 000 | 133 000 | 798 000 |
| | | | Գրանդ Ինսփեքշն ՍՊԸ | 1 400 000 | 0 | 1 400 000 |

4. **Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության և հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին**

Համաձայն ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» **/Կարգ/** 32-րդ կետի 21-րդ ենթակետի՝ Ընթացակարգի շրջանակում ներկայացված հայտերը 07.05.2026-14.05.2026թթ. ընկած ժամանակահատվածում ուսումնասիրվել են գնահատող հանձնաժողովի կողմից, որի արդյունքում Ընթացակարգի հրավերով **/Հրավեր/** պահանջվող փաստաթղթերի մասով արձանագրվել է հետևյալը.

- **Կայուն Զարգացման Ներդրումային Հիմնադրամի** կողմից ներկայացված հայտում ներառված են Հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը, որոնք կազմված են Հրավերով սահմանված կարգին և պահանջներին համապատասխան:
- **Գրանդ Ինսփեքշն ՍՊ ընկերության** կողմից ներկայացված հայտում ներառված են Հրավերով պահանջվող փաստաթղթերը, որոնք կազմված են Հրավերով սահմանված կարգին համապատասխան, սակայն ներկայացված գնային առաջարկը գերազանցում է Հրավերով նախատեսված գնման գինը, ուստի հայտը ենթակա է մերժման՝ Հրավերի պահանջներին անհամապատասխան լինելու հիմքով:

5. Գնահատման աղյուսակ

Չափաբաժին 1 Արեգի հեռուստատեսային հաղորդիչ կայանի էլեկտրասնուցման 10 կՎ օդային գծի նախագծերի պատրաստում և ծախսերի գնահատման խորհրդատվական ծառայություններ

| N | ՄԱՍՆԱԿՑԻ ԳՆԱՀԱՏՎՈՂ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ | Գնահատման առավելագույն միավորը | Մասնակցի գնահատման արդյունքները | |
|---|---|---|---|---|
| | | | Կայուն Զարգացման Ներդրումային Հիմնադրամ | Գրանդ Ինսփերշն ՍՊԸ |
| ՏԱ | Նախկինում՝ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում, պատշաճ ձևով կատարած պայմանագրի (պայմանագրերի, համաձայնագրերի) պատճենները | 40 | 40 | 40 |
| | Պայմանագրի կատարման համար առաջարկվող աշխատակազմում ներգրավված մասնագետների հաստատած գրավոր համաձայնությունների բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը՝ իրականացվելիք աշխատանքներում վերջիններիս ներգրավվելու մասին, ինչպես նաև մասնագետների անձնագրեր, որակավորումը հավաստող փաստաթղթեր (դիպլոմ, վկայագիր, հավաստագիր և այլն) | 30 | 30 | 30 |
| ԳՄ | ԳՄ= ՆԳ X 30/ԳԳ, որտեղ՝<br>ԳՄ-ն գնային առաջարկին տրվող միավորն է,<br>ՆԳ-ն նվազագույն գինն է<br>ԳԳ-ն գնահատվող մասնակցի առաջարկած գինն է | 30 | 30 | 17,1 |
| | | ՆԳ | 800 000 | |
| | | ԳԳ | 798 000 | 1 400 000 |
| | Ընդամենը ( ԳՄ + ՏԱ ) | 100 | 100 | 87,1 |
| ՄԳ | ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ՝ ՄԳ<br>ՄԳ = (ԳՄ X 0.7) + (ՏԱ X 0.3), որտեղ՝<br>ՄԳ-ն մասնակցին տրվող գնահատականն է,<br>ԳՄ-ն մասնակցի գնային առաջարկին տրված միավորն է,<br>ՏԱ-ն մասնակցի որակավորման հատկանիշներին և տեխնիկական առաջարկին տրված միավորն է. | 42 | 42 | 32,97 |

*ընտրված մասնակից է ճանաչվում այն մասնակիցը, որին տրված գնահատականը (ՄԳ) ամենաբարձրն է:*

6. Հանձնաժողովը որոշեց

6.1.Ղեկավարվելով Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետով՝ Կայուն Զարգացման Ներդրումային Հիմնադրամի կողմից ներկայացված հայտը գնահատել բավարար և հիմք ընդունելով Գնումների մասին ՀՀ օրենքի /Օրենք/ 34-րդ հոդվածը՝ 1-ին չափաբաժնով ընտրված մասնակից ճանաչել **Կայուն Զարգացման Ներդրումային Հիմնադրամ:**

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0

6.2 Հիմք ընդունելով Օրենք 34-րդ հոդվածը՝ հանձնաժողովը որոշեց **Գրանդ Ինսփերշն ՍՊԸ** հայտը գնահատել անբավարար և մերժել, քանի որ ներկայացված գնային առաջարկը գերազանցում է գնման համար նախատեսված գինը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0

6.3 Հիմք ընդունելով Օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասը՝ անգործության ժամկետ սահմանել 10 օրացուցային օր և Կայուն Զարգացման Ներդրումային Հիմնադրամին տրամադրել պայմանագրի նախագիծը՝ անգործության ժամկետի ավարտից հետո՝ 4-րդ աշխատանքային օրը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0

Հանձնաժողովի նախագահ՝ Սահակ Դավթյան

Հանձնաժողովի անդամներ՝ Սամվել Քոչարյան

Գուրգեն Սահակյան

Արման Մովսիսյան

Հարություն Հեքիմյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Անժելա Ավագյան